Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 30–ի 2009/147/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ

Վայրի թռչունների պահպանության մասին

Պաշտոնական տեղեկագիր L 020 , 26.01.2010թ., էջեր 0007 - 0025

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը և, մասնավորապես, դրա 175(1) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական և սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի եզրակացությունը [1],

գործելով Պայմանագրի 251–րդ հոդվածով սահմանված ընթացակարգին համապատասխան [2],

Քանի որ

1) «Վայրի թռչունների պահպանության մասին» Խորհրդի 1979 թվականի ապրիլի 2-ի 79/409/ԵՏՀ հրահանգը [3] մի քանի անգամ ենթարկվել է էական փոփոխությունների [4]: Հստակության և ռացիոնալության նկատառումներից ելնելով՝ նշված Հրահանգը պետք է կոդիֆիկացվի,

2) Համայնքի շրջակա միջավայրի գործողությունների վեցերորդ ծրագիրը սահմանող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002 թվականի հուլիսի 22-ի թիվ 1600/2002/ԵՀ [5] որոշմամբ առաջարկվում են կոնկրետ գործողություններ՝ ուղղված կենսաբազմազանությանը, այդ թվում՝ թռչունների և դրանց բնավայրերի պաշտպանությանը,

3) անդամ պետությունների եվրոպական տարածքում հանդիպող վայրի թռչունների բազմաթիվ տեսակների թիվը նվազում է, որոշ դեպքերում՝ չափազանց արագորեն: Այդ երևույթը լուրջ սպառնալիք է՝ ուղղված բնական միջավայրի պահպանությանը, որի հետևանքով վտանգի է ենթարկվում հատկապես կենսաբանական հավասարակշռությունը,

4) անդամ պետությունների եվրոպական տարածքում հանդիպող վայրի թռչունների տեսակները հիմնականում միգրացվող տեսակներ են: Այդպիսի տեսակները համընդհանուր ժառանգություն են կազմում, և թռչունների արդյունավետ պաշտպանությունը հիմնականում անդրսահմանային բնապահպանական խնդիր է, որն ընդհանուր պարտականություններ է ենթադրում,

5) անդամ պետությունների եվրոպական տարածքում սովորաբար հանդիպող վայրի թռչունների տեսակների պահպանությունն անհրաժեշտ է կենսամակարդակի բարելավմանը և կայուն զարգացմանն առնչվող՝ Համայնքի նպատակներին հասնելու համար,

6) ձեռնարկվելիք միջոցները պետք է կիրառվեն թռչունների թվի վրա ազդող տարբեր գործոնների նկատմամբ, ինչպիսիք մարդու գործունեության հետևանքներն են և, մասնավորապես, մարդու կողմից դրանց բնավայրերի ոչնչացումն ու աղտոտումը, զավթումն ու սպանությունը և այդպիսի գործելակերպերի արդյունքում՝ դրանց առևտուրը: Այդ միջոցների խստությունը պետք է համապատասխանեցվի

պահպանության քաղաքականության շրջանակում տարբեր տեսակների առանձնահատուկ վիճակին,

7) պահպանությունն ուղղված է բնական ռեսուրսների՝ որպես Եվրոպայի ժողովուրդների ժառանգության անքակտելի մասի երկարաժամկետ պաշտպանությանն ու կառավարմանը: Դա հնարավորություն է տալիս վերահսկելու բնական ռեսուրսները և կառավարելու դրանց գործածությունը՝ ելնելով այն միջոցներից, որոնք անհրաժեշտ են՝ տեսակների միջև բնական հավասարակշռությունն իրատեսորեն ու հնարավորինս պահպանելու և կարգավորելու համար,

8) բազմազանության բավարար մակարդակի և բնավայրերի պաշտպանությունը, պահպանությունը կամ վերականգնումն էական դեր են խաղում թռչունների բոլոր տեսակների պահպանության առումով: Թռչունների որոշ տեսակների նկատմամբ պետք է դրանց բնավայրերի առումով կիրառվեն պահպանության հատուկ միջոցներ, որոնք կապահովեն այդ թռչունների գոյությունը և վերարտադրությունը դրանց տարածման վայրում: Այդպիսի միջոցները պետք է հաշվի առնեն նաև միգրացվող տեսակները և համապարփակ ամբողջություն ստեղծելու նպատակով համակարգվեն,

9) ելնելով առևտրային շահերից՝ օգտագործման մակարդակներում հնարավոր վնասակար ճնշումները կանխելու համար անհրաժեշտ է ընդհանուր արգելք սահմանել շուկայահանման նկատմամբ և սահմանափակել բոլոր շեղումների կիրառումը այն տեսակների նկատմամբ, որոնց կենսաբանական վիճակը թույլ է տալիս դա՝ հաշվի առնելով տարբեր տարածաշրջաններում ապահովվող հատուկ պայմանները.

10) Համայնքում պոպուլյացիայի բարձր մակարդակի, տարածքային տեղաբաշխման և վերարտադրողական ցուցանիշի արդյունքում կարող է թույլատրվել որոշ տեսակների որսը, որը համարվում է ընդունելի օգտագործում, եթե հաստատվում ու հարգվում են

որոշակի սահմաններ, քանի որ այդպիսի որսը պետք է բավարար չափով համապատասխանի այդ տեսակների պոպուլյացիայի պահպանությանը,

11) տարբեր տրանսպորտային միջոցներով մասսայականորեն կամ առանց ընտրության թռչուններ բռնելու կամ սպանելու և որսալու տարբեր միջոցները, սարքերը կամ մեթոդները համապատասխան տեսակների վրա չափազանց մեծ ճնշում գործադրելու կամ գործադրելու հնարավորության պատճառով պետք է արգելվեն.

12) որոշակի կոնկրետ իրավիճակների կարևորությունից ելնելով՝ պետք է որոշակի պայմանների նկատմամբ հնարավոր շեղումների կիրառության և Հանձնաժողովի կողմից դիտանցման ենթարկվելու մասին դրույթ սահմանվի,

13) թռչունների, մասնավորապես՝ միգրացվող թռչունների պահպանության գործում, դեռևս առկա են այնպիսի խնդիրներ, որոնք գիտական ուսումնասիրության կարիք ունեն: Այդ ուսումնասիրությունը հնարավորություն կտա նաև գնահատելու ձեռնարկված միջոցների արդյունավետությունը,

14) Հանձնաժողովի հետ խորհրդակցելով՝ ուշադրություն պետք է դարձվի այն հանգամանքին, որ անդամ պետությունների եվրոպական տարածքում սովորաբար չհանդիպող վայրի թռչունների տեսակների ներթափանցումը վնաս չհասցնի տեղի բուսական և կենդանական աշխարհին,

15) Հանձնաժողովը յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ կազմում և անդամ պետություններին է ներկայացնում համապարփակ զեկույց սույն Հրահանգի համաձայն ներմուծված ազգային դրույթների կիրառության վերաբերյալ անդամ պետությունների կողմից ներկայացված տեղեկությունների հիման վրա,

16) սույն Հրահանգի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումները պետք է ընդունվեն համաձայն 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/EC հրահանգի, որը սահմանում է Հանձնաժողովին վերապահված կիրարկման լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերը [6],

17) մասնավորապես, Հանձնաժողովը պետք է որոշ հավելվածներ գիտական և տեխնիկական առաջընթացին համապատասխան փոփոխելու իրավասություն ունենա: Քանի որ այդ միջոցներն ընդհանուր բնույթ են կրում և նախատեսված են սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար, պետք է ընդունվեն 1999/468/ԵՀ հրահանգի 5(ա) հոդվածով նախատեսված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան,

18) սույն Հրահանգը չպետք է հակասի VI հավելվածի Բ մասով սահմանված՝ հրահանգները ազգային իրավունքում փոխատեղելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին,

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

1. Սույն Հրահանգը առնչվում է այն անդամ պետությունների եվրոպական տարածքում սովորաբար հանդիպող վայրի թռչունների տեսակների պահպանությանը: Այն կարգավորում է այդ տեսակների պաշտպանությունը, կառավարումն ու հսկողությունը և դրանց օգտագործման վերաբերյալ կանոններ է սահմանում:

2. Այն կիրառվում է թռչունների, դրանց ձվերի, բների և բնավայրերի նկատմամբ:

Հոդված 2

Անդամ պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ, որպեսզի 1–ին հոդվածում նշված տեսակների պոպուլյացիան պահպանեն այն մակարդակում, որը համապատասխանում է հատկապես բնապահպանական, գիտական և մշակութային պահանջներին՝ նկատի ունենալով տնտեսական և ժամանցային պահանջները, կամ որպեսզի այդ տեսակների պոպուլյացիան համապատասխանեցնեն այդ մակարդակին:

Հոդված 3

1. 2–րդ հոդվածում նշված պահանջներին համապատասխան՝ անդամ պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ՝ 1–ին հոդվածում նշված թռչունների բոլոր տեսակների համար անհրաժեշտ բազմազանությունը և բնավայրերի տարածքները պաշտպանելու, պահպանելու կամ վերահաստատելու ուղղությամբ:

2. Բիոտոպերի և բնավայրերի պաշտպանությունը, պահպանությունն ու վերահաստատումը ներառում են գլխավորապես հետևյալ միջոցները՝

ա) պաշտպանված տարածքների հիմնում.

բ) խնամք և կառավարում՝ պաշտպանված գոտիներում և դրանցից դուրս բնավայրերի բնապահպանական կարիքներին համապատասխան.

գ) ոչնչացված բիոտոպերի վերահաստատում.

դ) բիոտոպերի հիմնում:

Հոդված 4

1. I հավելվածում նշված որոշ տեսակների նկատմամբ պետք է կիրառվեն պահպանության հատուկ միջոցներ՝ դրանց բնավայրերի առումով, որոնք դրանց տարածման վայրում կապահովեն այդ թռչունների գոյությունը և վերարտադրությունը:

Այդ կապակցությամբ հաշվի են առնվում՝

ա) ոչնչացման եզրին գտնվող տեսակները.

բ) բնավայրերի հատուկ փոփոխությունների նկատմամբ զգայուն տեսակները.

գ) փոքրաթիվ պոպուլյացիայի կամ սահմանափակ տարածքներում տարածվածության պատճառով հազվադեպ համարվող տեսակները.

դ) այլ տեսակներ, որոնց անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն՝ դրանց բնավայրերի հատուկ բնույթի պատճառով:

Պոպուլյացիայի մակարդակների միտումները և փոփոխությունները հիմք են ծառայում գնահատումների համար:

Անդամ պետությունները ջրային և ցամաքային աշխարհագրական տարածքներում առանձնացնում են այդպիսի տեսակների պահպանության համար հատուկ պահպանական տարածքներ՝ նշելով դրանց թիվը և մակերեսը, որտեղ կիրառվում է սույն Հրահանգը:

2. Անդամ պետությունները նույն միջոցներն են ձեռնարկում I հավելվածում չթվարկված, սակայն պարբերաբար հանդիպող միգրացվող տեսակների համար՝ նկատի ունենալով, որ դրանք իրենց բազմացման, փետրաթափման և ձմեռելու համար նախատեսված տարածքների ու միգրացիոն ուղիների ընթացքում կայանելու առումով պաշտպանության կարիք ունեն այն ջրային և ցամաքային աշխարհագրական տարածքում, որտեղ կիրառվում է սույն Հրահանգը: Այդ նպատակով անդամ պետություններն առանձնահատուկ ուշադրություն են դարձնում ճահճացած հողերին, մասնավորապես՝ միջազգային նշանակություն ունեցող ճահճացած հողերին:

3. Անդամ պետությունները Հանձնաժողով են ուղարկում համապատասխան ամբողջ տեղեկատվությունը, որպեսզի այն կարողանա ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ նպատակ ունենալով կատարելու անհրաժեշտ համակարգում, որով կապահովի, որ 1–ին և 2–րդ պարբերություններով նախատեսված տարածքները կազմեն մեկ ընդհանուր ամբողջություն, որը կբավարարի այդ տեսակների պաշտպանության համար ներկայացվող պահանջները այն ջրային և ցամաքային աշխարհագրական տարածքներում, որտեղ սույն Հրահանգը կիրառվում է:

4. 1–ին և 2–րդ պարբերություններում նշված պաշտպանական տարածքների առումով անդամ պետությունները ձեռնարկում են համապատասխան քայլեր՝ բնավայրերի աղտոտումից կամ վատթարացումից, կամ թռչուններին անհանգստություններ

պատճառելուց խուսափելու համար՝ այնքանով, որքանով դրանք կարևորվում են՝ ելնելով սույն հոդվածի նպատակներից: Այդ պաշտպանական տարածքներից դուրս նույնպես անդամ պետությունները պետք է փորձեն զերծ մնալ բնավայրերի աղտոտումից կամ վատթարացումից:

Հոդված 5

Չհակասելով 7–րդ և 9–րդ հոդվածների դրույթներին՝ անդամ պետությունները համապատասխան միջոցներ են ձեռնարկում՝ 1–ին հոդվածում նշված թռչունների բոլոր տեսակների պաշտպանության ընդհանուր համակարգ սահմանելու համար՝ արգելելով հատկապես՝

ա) ցանկացած մեթոդով դրանց սպանելը կամ բռնելը.

բ) դրանց բների կամ ձվերի կամայական ոչնչացումը կամ բները քանդելը.

գ) ձվերը վերցնելը և պահելը, նույնիսկ, եթե դրանք դատարկ են.

դ) այդ թռչուններին անհանգստացնելը հատկապես բազմացման և բուծման շրջանում՝ այնքանով, որքանով դա կարևորվում է՝ սույն Հրահանգի նպատակներից ելնելով.

ե) այնպիսի թռչուններ պահելը, որոնց որսը և բռնելն արգելված է:

Հոդված 6

1. Չսահմանափակելով 2–րդ և 3–րդ պարբերությունների դրույթները՝ անդամ պետությունները 1–ին հոդվածում նշված թռչունների բոլոր տեսակների առնչությամբ արգելում են կենդանի կամ սատկած թռչունների, կամ այդպիսի թռչունների հեշտությամբ ճանաչելի ցանկացած մասի կամ դրանցից պատրաստված ապրանքների վաճառքը, վաճառքի նպատակով տեղափոխումը, վաճառքի նպատակով պահելը կամ վաճառքի առաջարկը:

2. 1–ին պարբերության մեջ նշված գործողությունները չեն արգելվում III հավելվածի Ա մասում նշված տեսակների առնչությամբ՝ պայմանով, որ թռչուններին սատկեցրել կամ բռնել են օրինականորեն կամ ձեռք են բերել օրինական այլ միջոցներով:

3. III հավելվածի Բ մասում նշված տեսակների առնչությամբ անդամ պետությունները կարող են իրենց տարածքում թույլ տալ 1–ին պարբերության մեջ նշված գործողությունները՝ սահմանելով որոշակի սահմանափակումներ՝ պայմանով, որ թռչուններին սատկեցրել կամ բռնել են օրինականորեն կամ ձեռք են բերել օրինական այլ միջոցներով:

Այդպիսի թույլտվություն տալ ցանկացող անդամ պետությունները նախևառաջ խորհրդակցում են Հանձնաժողովի հետ՝ նպատակ ունենալով համատեղ ուսումնասիրելու, թե արդյոք այդպիսի տեսակների շուկայահանումը կհանգեցնի կամ կարող է իրատեսորեն հանգեցնել Համայնքի ամբողջ տարածքում տվյալ տեսակի պոպուլյացիայի մակարդակի նվազեցման, խախտել տարածքային տեղաբաշխումը կամ ազդել վերարտադրողական ցուցանիշի վրա: Եթե ուսումնասիրության արդյունքում պարզվում է, որ նախատեսվող թույլտվությունը, Հանձնաժողովի կարծիքով կհանգեցնի վերը նշված տեսակներից որևէ մեկի վտանգմանը կամ հնարավոր վտանգմանը, Հանձնաժողովը հիմնավորված առաջարկություն է ուղարկում տվյալ անդամ պետություն՝ ներկայացնելով համապատասխան տեսակի շուկայահանման դեմ իր առարկությունը: Եթե Հանձնաժողովը չի նկատում որևէ այդպիսի վտանգ, այն դրա մասին տեղյակ է պահում համապատասխան անդամ պետությանը:

Հանձնաժողովի առաջարկությունը հրապարակվում է Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում:

Սույն պարբերության համաձայն թույլտվություն տվող անդամ պետությունները պարբերաբար ստուգում են թույլտվության տրամադրումը կարգավորող պայմաններին համապատասխանությունը:

Հոդված 7

1. Ելնելով Համայնքի տարածքում դրանց պոպուլյացիայի մակարդակից, տարածքային տեղաբաշխումից և վերարտադրողական ցուցանիշից՝ II հավելվածում թվարկված տեսակների որսը կարող է թույլատրվել ազգային օրենսդրությամբ: Անդամ պետություններն ապահովում են, որ այդ տեսակների որսը չվտանգի պահպանությանն ուղղված ջանքերը դրանց տեղաբաշխման տարածքում:

2. II հավելվածում նշված տեսակների որսը թույլատրվում է ջրային և ցամաքային աշխարհագրական տարածքներում, որտեղ կիրառվում է սույն Հրահանգը:

3. II հավելվածի Բ մասում նշված տեսակների որսը կարող է թույլատրվել միայն այն անդամ պետություններում, որոնց մասով դրանք նշված են:

4. Անդամ պետություններն ապահովում են, որ որսի՝ ներառյալ բազեներով որսի (կիրառության դեպքում) գործելակերպը, որն իրականացվում է գործող ազգային իրավական ակտերին համապատասխան, պահպանի խելամիտ օգտագործման և համապատասխան թռչունների տեսակների էկոլոգիապես հավասարակշռված հսկողության սկզբունքները, և որ այդ գործելակերպը, այդ տեսակների, հատկապես միգրացվող տեսակների առումով՝ համապատասխանի 2–րդ հոդվածից ծագող դրույթներին:

Դրանք պետք է հետևեն մասնավորապես, որ բուծման շրջանում կամ վերարտադրության տարբեր փուլերում չթույլատրվի այնպիսի թռչունների որսը, որոնց նկատմամբ կիրառվում են որսի մասին կանոնակարգեր:

Միգրացվող տեսակների դեպքում դրանք պետք է հետևեն մասնավորապես, որ վերարտադրության ժամանակաշրջանում կամ իրենց բուծման տարածքներ վերադարձի ընթացքում չթույլատրվի այնպիսի թռչունների որսը, որոնց նկատմամբ կիրառվում են որսի մասին կանոնակարգեր:

Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում որսի մասին իրենց կանոնակարգերի գործնական կիրառության վերաբերյալ բոլոր համապատասխան տեղեկությունները:

Հոդված 8

1. Սույն Հրահանգի համաձայն՝ թռչուններ որսալու, բռնելու կամ սպանելու մասով անդամ պետություններն արգելում են բոլոր այն միջոցները, պայմանները կամ մեթոդները, որոնք օգտագործվում են մասսայականորեն կամ առանց ընտրության՝ թռչուններ բռնելու կամ սպանելու համար, կամ որոնք կարող են հանգեցնել տվյալ վայրից այդ տեսակի

անհետացմանը, արգելվում է հատկապես IV հավելվածի (ա) կետում նշվածների գործադրումը:

2. Ավելին, անդամ պետություններն արգելում են որսը տրանսպորտային որևէ միջոցից և IV հավելվածի (բ) կետում նշված պայմաններում:

Հոդված 9

1. Անդամ պետությունները կարող են շեղում կատարել 5–8–րդ հոդվածների դրույթներից, եթե չկա որևէ այլ դրական լուծում հետևյալ պատճառներով՝

ա) – հանրային առողջության և անվտանգության շահերից ելնելով.

– օդի անվտանգության շահերից ելնելով.

– մշակաբույսերին, անասուններին, անտառներին, ձկնաբուծարաններին և ջրին սպառնացող վտանգը կանխելու համար.

– բուսական և կենդանական աշխարհի պահպանության համար.

բ) ուսումնասիրությունների և ուսուցման, պոպուլյացիայի թվակազմի վերականգնման, տվյալ բնավայրից վերացած թռչունների վերաբնակեցման ու այդ նպատակներով բազմացման համար.

գ) խստորեն վերահսկվող պայմաններում և ընտրության հիման վրա թույլատրել որոշակի թռչուններ բռնելը, պահելը կամ այլ ձևով փոքր թվով օրինականորեն օգտագործելը:

2. 1–րդ պարբերության մեջ նշված շեղումներում պետք է նշել՝

ա) այն տեսակները, որոնց նկատմամբ կիրառվում են շեղումներ.

բ) բռնելու կամ սպանելու համար թույլատրվող միջոցները, պայմանները կամ մեթոդները.

գ) ռիսկի գործոնները և ժամանակի ու տեղի հանգամանքները, որոնց համաձայն կարող են թույլատրվել այդպիսի շեղումներ.

դ) այն մարմինը, որն իրավասու է հայտարարելու, որ պահանջված պայմանները բավարարված են և որոշել այն միջոցները, պայմանները կամ մեթոդները, որոնք կարող են օգտագործվել, դրանց սահմանները և օգտագործողները.

ե) իրականացվելիք տեսչական ստուգումները:

3. Ամեն տարի անդամ պետությունները 1–ին և 2–րդ պարբերությունների իրականացման մասին Հանձնաժողով զեկույց են ուղարկում:

4. Ստացված տեղեկատվության և մասնավորապես 3–րդ պարբերության համաձայն տրամադրված տեղեկությունների հիման վրա Հանձնաժողովն անընդհատ ապահովում է, որ 1–ին պարբերության մեջ նշված շեղումների հետևանքները անհամատեղելի չլինեն սույն Հրահանգի հետ: Այդ նպատակով այն համապատասխան քայլեր է ձեռնարկում:

Հոդված 10

1. Անդամ պետությունները խրախուսում են ուսումնասիրությունը և ցանկացած աշխատանք, որ պահանջվում է՝ 1–ին հոդվածում նշված թռչունների բոլոր տեսակների պոպուլյացիայի պահպանության, կառավարման և օգտագործման համար:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի V հավելվածում թվարկված առարկաների մասով ուսումնասիրությունը և աշխատանքները:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ուղարկում անհրաժեշտ ցանկացած տեղեկատվություն, որը հնարավորություն կտա Հանձնաժողովին համապատասխան միջոցներ ձեռնարկելու՝ 1–ին պարբերության մեջ նշված ուսումնասիրությունն ու աշխատանքները համակարգելու համար:

Հոդված 11

Անդամ պետությունները հետևում են, որ անդամ պետությունների եվրոպական տարածքում սովորաբար չհանդիպող թռչունների վայրի տեսակների ներթափանցումը վնաս չհասցնի տեղի բուսական և կենդանական աշխարհին: Այդ կապակցությամբ նրանք խորհրդակցում են Հանձնաժողովի հետ:

Հոդված 12

1. Անդամ պետությունները 1981 թվականի ապրիլի 7–ից սկսած՝ յուրաքանչյուր երեք տարին մեկ անգամ Հանձնաժողով զեկույց են ներկայացնում սույն Հրահանգի համաձայն սահմանված ազգային դրույթների կիրարկման մասին:

2. Երեք տարին մեկ անգամ Հանձնաժողովը 1–րդ պարբերության մեջ նշված տեղեկությունների հիման վրա համապարփակ զեկույց է կազմում:

Զեկույցի նախագծի այն մասը, որի մեջ ընդգրկված տեղեկությունները տրամադրել է անդամ պետությունը, ստուգման նպատակով ներկայացվում է տվյալ անդամ պետության իշխանություններին:

Զեկույցի վերջնական տարբերակը ներկայացվում է անդամ պետություններ:

Հոդված 13

Սույն Հրահանգի համաձայն ձեռնարկված միջոցների կիրառությունը չի կարող հանգեցնել ներկա իրավիճակի վատթարացմանը՝ 1–ին հոդվածում նշված թռչունների տեսակների պահպանության առումով:

Հոդված 14

Անդամ պետությունները կարող են ներմուծել սույն Հրահանգով նախատեսվածից ավելի խիստ պահպանական միջոցառումներ:

Հոդված 15

Ընդունվում են այնպիսի փոփոխություններ, որոնք անհրաժեշտ են՝ I և V հավելվածները տեխնիկական և գիտական առաջընթացին համապատասխանեցնելու համար: Սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված այդ միջոցները պետք է ընդունվեն 16(2) հոդվածում նշված կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

Հոդված 16

1. Հանձնաժողովին տեխնիկական և գիտական առաջընթացին համապատասխանության հարցով օգնում է Կոմիտեն:

2. Եթե հղում է կատարվում սույն պարբերությանը, ապա կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ որոշման 5ա(1)-(4) հոդվածը և 7-րդ հոդվածը՝ հաշվի առնելով դրա 8–րդ հոդվածի դրույթները:

Հոդված 17

Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի հիմնական դրույթների տեքստերը, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

Հոդված 18

VI հավելվածի Ա մասում նշված ակտերով փոփոխված թիվ 79/409/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում՝ չհակասելով I հավելվածի Բ մասով սահմանված՝ հրահանգներն ազգային իրավունքում փոխատեղելու ժամկետների վերաբերյալ անդամ պետությունների պարտավորություններին:

Ուժը կորցրած հրահանգին արված հղումները պետք է մեկնաբանվեն որպես սույն Հրահանգին արված հղումներ և պետք է ընթերցվեն ըստ VII հավելվածում սահմանված համեմատական աղյուսակի:

Հոդված 19

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:

Հոդված 20

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 2009 թվականի նոյեմբերի 30-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝	*Խորհրդի կողմից՝*
Նախագահ	*Նախագահ*
Յ. Բուզեկ	Բ. Ասք

---

[1] 2009 թվականի հունիսի 10–ի եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել)

[2] Եվրոպական պառլամենտի 2009 թվականի հոկտեմբերի 20–ի եզրակացություն (Պաշտոնական տեղեկագրում դեռևս չի հրապարակվել) և Խորհրդի 2009 թվականի նոյեմբերի 26–ի որոշում:

[3] ՊՏ L 103, 25.04.1979թ., էջ 1:

[4] Տե՛ս Հավելված VI, մաս Ա:

[5] ՊՏ L 242, 10.09.2002թ., էջ 1:

[6] ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23:

ՀԱՎԵԼՎԱԾ I

ՍՈՒԶԱՀԱՎԱՆՄԱՆՆԵՐ

Սուզահավերի ընտանիք

Կարմրախածի սուզահավ

Սևխածի սուզահավ

Սովորական սուզահավ

ՍՈՒԶԱԿԱՆՄԱՆՆԵՐ

Սուզակների ընտանիք

Կարմրավիզ սուզակ

ԵՐԿԱՐԱՌՆԳԱՎՈՐՆԵՐ

Procellariidae

Pterodroma madeira

Pterodroma feae

Bulweria bulwerii

Calonectris diomedea

Puffinus puffinus mauretanicus (Puffinus mauretanicus)

Puffinus yelkouan

Puffinus assimilis

Hydrobatidae

Pelagodroma marina

Hydrobates pelagicus

Oceanodroma leucorhoa

Oceanodroma castro

ՀԱՎԱԼՈՒՄՆԱՆՄԱՆՆԵՐ

Հավալուսնների ընտանիք

Վարդագույն հավալուսն

Գանգրափետուր հավալուսն

Ձկնկուլների ընտանիք

Փուփուլավոր ձկնկուլ

Փոքր ձկնկուլ

ԱՐԱԳԻԼԱՆՄԱՆՆԵՐ

Տառեղների ընտանիք

Մեծ ջրցուլ

Փոքր ջրցուլ

Կվակվա

Դեղին տառեղ

Սպիտակ փոքր տառեղ

Սպիտակ փոքր տառեղ

Շիկակարմիր տառեղ

Արագիլների ընտանիք

Սև արագիլ

Սպիտակ արագիլ

Քաջահավեր

Քաջահավ

Տարգալակտուց

ՖԼԱՄԻՆԳՈՆՄԱՆՆԵՐ

Ֆլամինգոների ընտանիք

Կարմիր ֆլամինգո

ՍԱԳԱՆՄԱՆՆԵՐ

Բադերի ընտանիք

Փոքր կարապ

Ճչան կարապ

Սպիտակաճակատ սագ

Ծվվան սագ

Սպիտակաայտ սագ

Կարմրախածի սագ

Կարմիր բադ

Մարմարյա մրտիմն

Սպիտակաաչք սուզաբադ

Ստելլերի այդերուկ

Լուտոկ

Սպիտակագլուխ բադ

ՃՈՒՌԱԿԱՆՄԱՆՆԵՐ

Ջրարծիվների ընտանիք

Ջրարծիվ

Ճուռակների ընտանիք

Կրետակեր

Ծխագույն ցին

Սև ցին

Կարմիր ցին

Սպիտակապոչ արծիվ

Գառնանգղ

Գիշանգղ

Սպիտակագլուխ անգղ

Սև անգղ

Օձակեր արծիվ

Ճահճային մկնաճուռակ

Դաշտային մկնաճուռակ

Տափաստանային մկնաճուռակ

Մարգագետնային մկնաճուռակ

Ցախաքլորաորս

Լորաճուռակ

Եվրոպական ճնճղաճուռակ

Տափաստանային ճուռակ

Փոքր արծիվ

Մեծ արծվիկ

Գերեզմանարծիվ

Մեծ արծվիկ

Քարարծիվ

Գաճաճ արծիվ

Ճուռակային արծիվ

Բազեների ընտանիք

Տափաստանային հողմավար բազե

Կարմրաոտ բազե

Աղավնաբազե

Էլեոնորայի բազե

Միջերկրածովյան բազե

Բալոբան

Ճախրուկ

Սապսան

ՀԱՎԱՆՄԱՆՆԵՐ

Մայրեհավերի (ցախաքլորների) ընտանիք

Սովորական աքար

Տունդրայի կաքավ

Տունդրայի կաքավ

Tetrao tetrix tetrix

Խլահավ

Փասիանների ընտանիք

Քարակաքավ

Alectoris barbara

Մոխրագույն կաքավ

Մոխրագույն կաքավ

ԿՌՈՒՆԿԱՆՄԱՆՆԵՐ

Եռամատնիկների ընտանիք

Անտառային եռամատնիկ

Կռունկների ընտանիք

Մոխրագույն կռունկ

Հովվիկների ընտանիք

Մեծ ճահճահովվիկ

Եվրոպական ճահճահովվիկ

Գաճաճ ճահճահովվիկ

Մորգահավ

Սուլանական հավ

Փուփուլավոր փարփար

Արոսների ընտանիք

Փոքր արոս

Գեղանի արոս

Մեծ արոս

ՔԱՐԱԴՐԱՆՄԱՆՆԵՐ

Բզակտուցների ընտանիք

Ոտնացուպակ

Բզակտուց

Ավդոտկաների ընտանիք

Ավդոտկա

Տիրկուշկաների ընտանիք

Կտցար–վազկան

Մարգագետնային ծիծառակտցար

Քարադրների ընտանիք

Ծովային քարադր

Պինդիրա

Ոսկեփայլ քարադր

Hoplopterus spinosus

Մորակտցարների ընտանիք

Սևախածի ավազակտցար

Կռվակտցար

Կրկնակտցար

Փոքր իլիկակտցար

Նրբակտուց արորիկ

Ֆիֆի

Xenus cinereus (Tringa cinerea)

Կլորաքիթ լողակտցար

Որորների ընտանիք

Սևագլուխ Որոր

Ծիվային Աղավնաորոր

Օդուենի որոր

Փոքր Որոր

Ջրածիծառների ընտանիք

Որորակտուց ջրածիծառ

Կասպիական ջրածիծառ

Sterna sandvicensis

Վարդագույն ջրածիծառ

Գետային ջրածիծառ

Բևեռային (երկարապոչ) ջրածիծառ

Փոքր ջրածիծառ

Սպիտակայտ ջրածիծառ

Սև ջրածիծառ

Թանձրահավերի ընտանիք

Նրբակտուց կայրա

ԴՌԼՈՆԱՆՄԱՆՆԵՐ

Դռլոնների ընտանիք

Սևափոր դռլոն

Սպիտակափոր դռլոն

ԱՂԱՎՆԱՆՄԱՆՆԵՐ

Աղավնիներ

Անտառային աղավնի

Columba trocaz

Columba bollii

Columba junoniae

ԲՎԱՆՄԱՆՆԵՐ

Իսկական բվերի ընտանիք

Սովորական բվեճ

Սպիտակ (բևեռային) բու

Ճուռակաբու

Ճնճղուկային բվիճակ

Մուրուքավոր անտառաբու

Երկարապոչ անտառաբու

Ճահճային բու

Թավշաոտ բվիկ

ԱՅԾԿԻԹԱՆՄԱՆՆԵՐ

Իսկական այծկիթների ընտանիք

Սովորական այծկիթ

ՄԱՆԳԱՂԱԹԵՎԱՆՄԱՆՆԵՐ

Մանգաղաթևավորների ընտանիք

Apus caffer

ՃԵՂԱԳՌԱՎԱՆՄԱՆՆԵՐ

Ալկիոնների ընտանիք

Երկնագույն ալկիոն

Ներկարարների ընտանիք

Սովորական ներկարար

ՓԱՅՏՓՈՐԱՆՄԱՆՆԵՐ

Փայտփորների ընտանիք

Picus canus

Սև փայտփոր

Մեծ խայտաբղետ փայտփոր

Խայտաբղետ փայտփոր

Սիրիական փայտփոր

Միջին փայտփոր

Սպիտակամեջք փայտփոր

Եռամատ փայտփոր

ՃՆՃՂՈՒԿԱՆՄԱՆՆԵՐ

Արտույտների ընտանիք

Chersophilus duponti

Տափաստանային արտույտ

Փոքր արտույտ

Galerida theklae

Անտառային արտույտ

Խաղտուտների ընտանիք

Մարգագետնային ձիաթռչնակ

Ցախսարեկների ընտանիք

Եղնջաթռչնակ

Ճանճորսների (կեռնեխների) ընտանիք

Կապտափող սոխակ

Կեռնեխակտուց

Սպիտակապոչ քարակեցիկ

Կիպրոսյան քարակեցիկ

Սևաթիկունք քարաթռչնակ

Ճանճորսների (շիկահավերի) ընտանիք

Նրբակտուց եղեգնահավ

Շարժուն եղեգնահավ

Միջերկրածովյան դեղնաճաղրիկ

Սարդինյան շիկահավ

Sylvia undata

Sylvia melanothorax

Sylvia rueppelli

Ճուռակային շիկահավ

Ճանճորսների ընտանիք

Փոքր ճանճորս

Կիսասպիտակավիզ ճանճորս

Սպիտակավիզ ճանճորս

Երաշտահավերի ընտանիք

Սև երաշտահավ

Սողահավերի ընտանիք

Sitta krueperi

Sitta whiteheadi

Ծվծվիկների ընտանիք

Կարճամատ ծվծվիկ

Շամփրուկների ընտանիք

Սովորական շամփրուկ

Սևաճակատ շամփրուկ

Դիմակավոր շամփրուկ

Ագռավների ընտանիք

Լեռնաճայեկ

Սերինոսազգիների ընտանիք

Սերինոս

Fringilla teydea

Սերինոսազգիների ընտանիք

Loxia scotica

Անապատային խածկտիկ

խածկտիկ

Դրախտապանների ընտանիք

Մոխրագույն դրախտապան

Այգու դրախտապան

Կարմրակտուց դրախտապան

ՀԱՎԵԼՎԱԾ II

ՄԱՍ Ա

ՍԱԳԱՆՄԱՆՆԵՐ

Բադերի ընտանիք

Սագ–հումենիկ|

Մոխրագույն սագ

Branta canadensis

Շչան բադ

Մոխրագույն բադ

Սուլող մրտիմն

Կոնչան բադ

Մետապոչ բադ

Ճքճքան մրտիմն

Լայնակտուց բադ

Կարմրագլուխ սուզաբադ

Փուփուլավոր սուզաբադ

ՀԱՎԱՆՄԱՆՆԵՐ

Մայրեհավերի (ցախաքլորների) ընտանիք

Lagopus lagopus scoticus et hibernicus

Տունդրայի կաքավ

Փասիանների ընտանիք

Քարակաքավ

Alectoris rufa

Մոխրագույն կաքավ

Անդրկովկասյան փասիան

ԿՌՈՒՆԿԱՆՄԱՆՆԵՐ

Հովվիկների ընտանիք

Սև փարփար

ՔԱՐԱԴՐԱՆՄԱՆՆԵՐ

Մորակտցարների ընտանիք

Վարսակտցար

Մորակտցար

Անտառակտցար

ԱՂԱՎՆԱՆՄԱՆՆԵՐ

Աղավնիներ

Թխակապույտ աղավնի

Անտառային աղավնի

ՄԱՍ Բ

ՍԱԳԱՆՄԱՆՆԵՐ

Բադերի ընտանիք

Թժժան կարապ

Վարդագունաոտ սագ |

Սպիտակաճակատ սագ

Սև սագ

Կարմրակտուց սուզաբադ

Ծովային սուզաբադ

Այդերուկ

Ծովային բադ

Սև տուրպան

Տուրպան | | | | + | + | | | | + | + | | | + | | | | | | | | | | | | + | + | + |

Սոնաբադ

Սղոցակտուց բադ

Մեծ սղոցակտուց բադ

ՀԱՎԱՆՄԱՆՆԵՐ

Հնդկահավերի ընտանիք

Հնդկահավ

Մայրեհավերի (ցախաքլորների) ընտանիք

Սովորական աքար

Սպիտակ կաքավ

Tetrao tetrix

Խլահավ

Փասիանների ընտանիք

Թուրաջ

Alectoris barbara

Քարակաքավ

Լոր

ԿՌՈՒՆԿԱՆՄԱՆՆԵՐ

Հովվիկների ընտանիք

Ջրահովվիկ

Եղեգնահավ

ՔԱՐԱԴՐԱՆՄԱՆՆԵՐ

Կտցար–կաչաղակների ընտանիք

Կտցար կաչաղակ

Քարադրների ընտանիք

Ոսկեփայլ քարադր

Մոխրագույն քարադր

Սովորական կիվիվ

Մորակտցարների ընտանիք

Կարմիր ավազակտցար

Կռվակտցար

Մեծ իլիկակտցար

Փոքր իլիկակտցար

Միջին արորիկ

Մեծ արորիկ

Պտավոր կտցար

Կարմրաոտ կտցար

Ծխագույն կտցար

Որորների ընտանիք

Սովորական որոր

Թխակապույտ որոր

Փոքր ծովաորոր

Արծաթափայլ որոր

Քրքջան որոր

Մեծ սևամեջք որոր

ԱՂԱՎՆԱՆՄԱՆՆԵՐ

Աղավնիներ

Հոբալ

Օղակավոր տատրակ

Սովորական տատրակ

ՃՆՃՂՈՒԿԱՆՄԱՆՆԵՐ

Արտույտների ընտանիք

Դաշտային արտույտ

Ճանճորսների ընտանիք

Սև կեռնեխ

Սինակեռնեխ

Երգող կեռնեխ

Սպիտակահոնք կեռնեխ

Սոսնձակեռնեխ

Սարյակների ընտանիք

Սովորական սարյակ

Ագռավների ընտանիք

Անտառային կաչաղակ

Սովորական կաչաղակ

Սովորական ճայ

Սերմնաքաղ

| BE | BG | CZ | DK | DE | EE | EL | ES | FR | IE | IT | CY | LV | LT | LU | HU | MT | NL | AT | PL | PT | RO | SI | SK | FI | SE | UK |

Մոխրագույն ագռավ | + | + | + | + | + | + | + | + | + | + | | + | + | + | + | + | + | + | | + | | | + | + | + | + | + | + | + |

Թժժան կարապ | | | | | + | | | | | | | | | | | | | | + | | | | | | | | |

Վարդագունաոտ սագ | + | | | + | | | | | | + | | | | | | | | | | | | | | | | | | + |

Սպիտակաճակատ սագ | + | + | + | + | + | + | + | + | | + | + | | + | + | + | | | + | | + | | | + | | | + | | + | | + | | + | | + |

Սև սագ | | | | + | + | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |

Կարմրակտուց սուզաբադ | | | | | | | | + | + | | | | | | | | | | | | | | | | | | | |

Ծովային սուզաբադ | + | | | + | + | | + | | + | + | | | + | | | | | + | | | | + | | | | | + |

Այդերուկ | | | | + | | + | | | + | + | | | | | | | | | | | | | | | | + | + | |

Ծովային բադ | | | | + | | + | | | + | + | | | + | | | | | | | | | | | | | | + | + | + |

Սև տուրպան | | | | + | + | + | | | + | + | | | + | | | | | | | | | | | | | | + | + | + |

Տուրպան | | | | + | + | | | | + | + | | | + | | | | | | | | | | | | | | + | + | + |

Սոնաբադ | | | | + | | + | + | | + | + | | | + | + | | + | | | + | | | + | | | + | + | + |

Սղոցակտուց բադ | | | | + | | | | | | + | | | | | | | + | | | | | | | | + | + | |

Մեծ սղոցակտուց բադ | | | | + | | | | | | + | | | | | | | | | | | | | | | + | + | |

Սովորական աքար | | | | | | + | | | + | | | | + | | | | | | + | + | | + | | + | + | + | |

Սպիտակ կաքավ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | + | + | |

Tetrao tetrix | + | | | | + | | | | + | | + | | + | | | | | | + | | | | | | + | + | + |

Խլահավ | | + | | | + | | | | + | | + | | + | | | | | | + | | | + | | | + | + | + |

Թուրաջ | | | | | | | | | | | | + | | | | | | | | | | | | | | | |

Alectoris barbara | | | | | | | | + | | | + | | | | | | | | | | | | | | | | |

Քարակաքավ | | + | | | | | + | | | | | + | | | | | | | | | | | | | | | |

Լոր | | + | | | | | + | + | + | | + | + | | | | | + | | + | | + | + | | | | | |

Հնդկահավ | | | + | | + | | | | | | | | | | | | | | + | | | | | + | | | |

Ջրահովվիկ | | | | | | | | | | + | | + | | | | | | + | | | | | | | | | |

Եղեգնահավ | + | | | | | | + | | + | | + | | | | | | + | | | | + | + | | | | | + |

Կտցար կաչաղակ | | | | + | | | | | + | | | | | | | | | | | | | | | | | | |

Ոսկեփայլ քարադր | + | | | + | | | + | | + | + | | | | | | | + | + | | | + | | | | | | + |

Մոխրագույն քարադր | | | | + | | | | | + | | | | | | | | + | | | | | | | | | + |

Սովորական կիվիվ | + | | | + | | | + | + | + | + | + | | | | | | + | | | | | | | | | |

Կարմիր ավազակտցար | | | | + | | | | | + | | | | | | | | | | | | | | | | | | |

Կռվակտցար | | | | | | | | | + | | + | | | | | | + | | | | | | | | | | |

Մեծ իլիկակտցար | | | | + | | | | | + | | | | | | | | | | | | | | | | | | |

Փոքր իլիկակտցար | | | | + | | | | | + | | | | | | | | | | | | | | | | | | |

Միջին արորիկ | | | | + | | | | | + | | | | | | | | | | | | | | | | | | + |

Մեծ արորիկ | | | | + | | | | | + | + | | | | | | | | | | | | | | | | | + |

Պտավոր կտցար | | | | + | | | | | + | | | | | | | | | | | | | | | | | | |

Կարմրաոտ կտցար | | | | + | | | | | + | | + | | | | | | | | | | | | | | | | + |

Ծխագույն կտցար | | | | + | | | | | + | | | | | | | | | | | | | | | | | |

Սովորական որոր | + | | | + | + | + | | + | | | | | | | | + | | | + | | | | | + | | + | |

Թխակապույտ որոր | | | | + | + | + | | | | | | | | | | | | | | | | | | + | + | |

Փոքր ծովաորոր | | | | + | + | | | | | | | | | | | | | | | | | | | | |

Արծաթափայլ որոր | + | | | + | + | + | | | | | | | + | | | | | | | | | | | | | + | + | |

Քրքջան որոր | | | | | | | | + | | | | | | | | + | | | | | | | | | | | |

Մեծ սևամեջք որոր | | | | + | + | + | | | | | | | | | | | | | | | | | | | | | + | + | |

Հոբալ | | | | | | | + | + | + | | | + | | | | | | | | | + | + | | | | | |

Օղակավոր տատրակ | | + | + | + | + | | | | + | | | + | | | | + | | | + | | | + | | + | | | |

Սովորական տատրակ | | + | | | | | + | + | + | | + | + | | | | | + | | + | | + | + | | | | | |

Դաշտային արտույտ | | | | | | | + | | + | | + | + | | | | | + | | | | | + | | | | | |

Սև կեռնեխ | | | | | | | + | | + | | + | + | | | | | + | | | | + | | | | | + | |

Սինակեռնեխ | | | | | | + | + | + | + | | + | + | | | | | + | | + | | + | + | | | + | + | |

Երգող կեռնեխ | | | | | | | + | + | + | | + | + | | | | | + | | | | + | + | | | | | |

Սպիտակահոնք կեռնեխ | | | | | | | + | + | + | | + | + | | | | | + | | | | + | + | | | | | |

Սոսնձակեռնեխ | | | | | | | + | + | + | | + | + | | | | | + | | | | + | + | | | | | |

Սովորական սարյակ | | + | | | | | + | + | + | | | + | | | | + | + | | | | + | + | | | | | |

Անտառային կաչաղակ | + | | | + | + | | | | + | | + | | | | + | + | | + | | | + | + | + | + | | + | + |

Սովորական կաչաղակ | + | + | + | + | + | | + | + | + | | + | + | + | | + | + | | + | | | + | + | + | + | + | + | + | + | + |

Սովորական ճայ | | + | | | | | + | + | | | | + | | | | | | + | | | | + | | | + | + | + |

Սերմնաքաղ | | + | | | | + | | | + | | | | | + | | + | | | | | | + | | + | | | + | + |

Մոխրագույն ագռավ | + | + | + | + | + | + | + | + | + | + | | + | + | + | + | + | + | | + | | | + | + | + | + | + | + | + |

AT = Ավստրիա, BE = Բելգիա, BG = Բուլղարիա, CY = Կիպրոս, CZ = Չեխիայի Հանրապետություն, DE = Գերմանիա, DK = Դանիա, EE = Էստոնիա, ES = Իսպանիա, FI = Ֆինլանդիա, FR = Ֆրանսիա, EL = Հունաստան, HU = Հունգարիա, IE = Իռլանդիա, IT = Իտալիա, LT = Լիտվա, LU = Լյուքսեմբուրգ, LV = Լատվիա, MT = Մալթա, NL = Նիդեռլանդներ, PL = Լեհաստան, PT = Պորտուգալիա, RO = Ռումինիա, SE = Շվեդիա, SI = Սլովենիա, SK = Սլովակիա, UK = Միացյալ Թագավորություն:

+ = Այն անդամ պետությունները, որոնք, համաձայն 7(3) հոդվածի, կարող են թույլատրել թվարկված տեսակների որսը:

ՀԱՎԵԼՎԱԾ III

ՄԱՍ Ա

ՍԱԳԱՆՄԱՆՆԵՐ

Բադերի ընտանիք

Կոնչան բադ

ՀԱՎԱՆՄԱՆՆԵՐ

Մայրեհավերի (ցախաքլորների) ընտանիք

Lagopus lagopus lagopus, scoticus et hibernicus

Փասիանների ընտանիք

Alectoris rufa

Alectoris barbara

Մոխրագույն կաքավ

Անդրկովկասյան փասիան

ԱՂԱՎՆԱՆՄԱՆՆԵՐ

Աղավնիների ընտանիք

Անտառային աղավնի

ՄԱՍ Բ

ՍԱԳԱՆՄԱՆՆԵՐ

Բադերի ընտանիք

Սպիտակաճակատ սագ

Մոխրագույն սագ

Շչան բադ

Սուլող մրտիմն

Մետապոչ բադ

Լայնակտուց բադ

Կարմրագլուխ սուզաբադ

Փուփուլավոր Սուզաբադ

Ծովային սուզաբադ

Այդերուկ

Սև տուրպան

ՀԱՎԱՆՄԱՆՆԵՐ

Մայրեհավերի (ցախաքլորների) ընտանիք

Տունդրայի կաքավ

Tetrao tetrix britannicus

Խլահավ

ԿՌՈՒՆԿԱՆՄԱՆՆԵՐ

Հովվիկների ընտանիք

Սև փարփար

ՔԱՐԱԴՐԱՆՄԱՆՆԵՐ

Քարադրների ընտանիք

Ոսկեփայլ քարադր

Մորակտցարների ընտանիք

Վարսակտցար

Մորակտցար

Անտառակտցար

ՀԱՎԵԼՎԱԾ IV

ա) – Ծուղակներ (բացառությամբ Ֆինլանդիայի և Շվեդիայի, որտեղ թույլատրվում է դրանց օգտագործումը 58 աստիճան հյուսիսային լայնության հատվածում՝ սպիտակ կաքավի և տունդրային կաքավի որսի համար), թռչնի ծերտ, կեռչաններ, կույր կամ վիրավոր թռչունների օգտագործումը՝ որպես խայծեր, ինչպես նաև՝ ձայնարձակիչների, էլեկտրական հոսանքի գործադրում,

– լուսարձակներ, հայելիներ, որսի օբյեկտի լուսավորման սարքեր, գիշերային ժամերի համար կիրառվող նշանոցային սարքեր, այդ թվում՝ պատկերի խոշորացման էլեկտրական սարք կամ պատկերի փոխարկիչ.

– պայթուցիկ նյութեր.

– ցանցեր, թակարդներ, թունավոր կամ անզգայացնող նյութեր.

– կիսաավտոմատ կամ ավտոմատ զենքեր՝ ավելի քան երկու կրակահերթի հնարավորությամբ պահեստատուփով.

բ) – ինքնաթիռներ, ավտոմեքենաներ.

– 5 կմ/ժ արագությունը գերազանցող նավակներ: Բաց ծովում անդամ պետությունները, անվտանգության նկատառումներից ելնելով, կարող են թույլատրել առավելագույնը 18 կմ/ժ արագություն ունեցող մոտորանավակների գործածությունը: Անդամ պետությունները Հանձնաժողովին տեղեկացնում են տրամադրված ցանկացած թույլտվության մասին:

ՀԱՎԵԼՎԱԾ V

ա) Ոչնչացման եզրին գտնվող տեսակները կամ առանձնապես վտանգված տեսակները սահմանող ազգային ցանկեր՝ ելնելով դրանց տարածքային տեղաբաշխումից:

բ) Միգրացվող տեսակների համար՝ դրանց միգրացիոն ուղիների առումով և որպես ձմեռելու վայրեր ու բնատեղեր առանձնահատուկ կարևորություն ներկայացնող տարածքների ցանկը և բնապահպանական նկարագրությունը:

գ) Միգրացվող տեսակների պոպուլյացիայի մակարդակների մասին տվյալների ցանկը՝ ըստ օղավորման:

դ) Վայրի թռչուններ բռնելու մեթոդների՝ պոպուլյացիայի մակարդակների վրա գործող ազդեցության գնահատումը:

ե) Բնապահպանական մեթոդների մշակում կամ բարելավում՝ թռչունների կողմից հասցվող վնասը կանխելու նպատակով:

զ) Որոշակի տեսակների դերի որոշումը՝ աղտոտման ցուցանիշների առումով:

է) Քիմիական աղտոտման՝ թռչունների տեսակների պոպուլյացիայի մակարդակների վրա թողած բացասական ազդեցության ուսումնասիրությունը:

ՀԱՎԵԼՎԱԾ VI

ՄԱՍ Ա

ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉՎԱԾ ՀՐԱՀԱՆԳՆ ԻՐ ՀԵՏԱԳԱ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿՈՎ

(18–րդ հոդվածում նշված)

Խորհրդի 79/409/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 103, 25.04.1979թ., էջ 1)

1979 թվականի «Անդամակցության մասին ակտ», I հավելված, կետ XIII.1.Զ (ՊՏ L 291, 19.11.1979թ., էջ 111)

Խորհրդի 81/854/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 319, 07.11.1981թ., էջ 3)

Հանձնաժողովի 85/411/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 233, 30.08.1985թ., էջ 33)

1985 թվականի «Անդամակցության մասին» ակտ, I հավելված, X.1 (ը) և X.6 կետեր.(ՊՏ L 302, 15.11.1985թ., էջ 218)

Խորհրդի 86/122/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 100, 16.04.1986թ., էջ 22)

Հանձնաժողովի 91/244/ԵՏՀ հրահանգ (ՊՏ L 115, 08.05.1991թ., էջ 41)

Խորհրդի 94/24/ԵՀ հրահանգ (ՊՏ L 164, 30.06.1994թ., էջ 9)

1994 թվականի «Անդամակցության մասին» ակտ, I հավելված, VIII.Ե.1 կետ (ՊՏ C 241, 29.08.1994թ., էջ 175)

Հանձնաժողովի 97/49/ԵՀ հրահանգ (ՊՏ L 223, 13.08.1997թ., էջ 9):

Խորհրդի թիվ 807/2003 կանոնակարգ (ԵՀ) (ՊՏ L 122, 16.05.2003թ., էջ 36) միայն III հավելված, 29–րդ կետ

2003 թվականի «Անդամակցության մասին». ակտ, II

հավելված, 16.Գ.1 կետ (ՊՏ L 236, 23.09.2003թ., էջ 667)

Խորհրդի 2006/105/ԵՀ հրահանգ (ՊՏ L 363, 20.12.2006թ. էջ 368)

միայն I հոդվածում 79/409/ԵՏՀ հրահանգին կատարված հղման և Հավելվածի Ա.1 կետի առնչությամբ

Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008/102/ԵՀ հրահանգ (ՊՏ L 323, 3.12.2008թ., էջ 31)

ՄԱՍ Բ

ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ ՓՈԽԱՏԵՂՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՑԱՆԿԸ

(18–րդ հոդվածում նշված)

Հրահանգներ	**Փոխատեղման ժամկետը**
79/409/ԵՏՀ	1981 թվականի ապրիլի 7
81/854/ԵՏՀ	—
85/411/ԵՏՀ	1986 թվականի հուլիսի 31
86/122/ԵՏՀ	—
91/244/ԵՏՀ	1992 թվականի հուլիսի 31
94/24/ԵՀ	1995 թվականի սեպտեմբերի 29
97/49/ԵՀ	1998 թվականի սեպտեմբերի 30
2006/105/ԵՀ	2007 թվականի հունվարի 1
2008/102/ԵՀ	—

ՀԱՎԵԼՎԱԾ VII

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

79/409/ԵՏՀ հրահանգ	**Սույն հրահանգը**
1(1) և (2) հոդված	1(1) և (2) հոդված
1(3) հոդված	—
2-5–րդ հոդվածներ	2-5–րդ հոդվածներ
6(1), (2) և (3) հոդված	6(1), (2) և (3) հոդված
6(4) հոդված	—
7(1), (2) և (3) հոդված	7(1), (2) և (3) հոդված
7(4) հոդված, առաջին նախադասություն	7(4) հոդված, առաջին ենթապարբերություն
7(4) հոդված, երկրորդ նախադասություն	7(4) հոդված, երկրորդ ենթապարբերություն
7(4) հոդված, երրորդ նախադասություն	7(4) հոդված, երրորդ ենթապարբերություն
7(4) հոդված, չորրորդ նախադասություն	7(4) հոդված, չորրորդ ենթապարբերություն
8-րդ հոդված	8-րդ հոդված
9(1) հոդված	9(1) հոդված
9(2) հոդված, ներածություն	9(2) հոդված, ներածություն
9(2) հոդված, առաջին պարբերույթ	9(2)(ա) հոդված
9(2) հոդված, երկրորդ պարբերույթ	9(2)(բ) հոդված
9(2) հոդված, երրորդ պարբերույթ	9(2)(գ) հոդված
9(2) հոդված, չորրորդ պարբերույթ	9(2)(դ) հոդված
9(2) հոդված, հինգերորդ պարբերույթ	9(2)(ե) հոդված
9(3) հոդված	9(3) հոդված
9(4) հոդված	9(4) հոդված
10(1) հոդված	10(1) հոդված, առաջին նախադասություն
հոդված 10(2), առաջին նախադասություն	10(1) հոդված, երկրորդ նախադասություն

հոդված 10(2), երկրորդ նախադասություն	10(2) հոդված
11-15–րդ հոդվածներ	11-15–րդ հոդվածներ
16(1) հոդված	—
17-րդ հոդված	16-րդ հոդված
18(1) հոդված	—
18(2) հոդված	17-րդ հոդված
—	18-րդ հոդված
—	19-րդ հոդված
19-րդ հոդված	20-րդ հոդված
I հավելված	I հավելված
II/1 հավելված	II, հավելված, Ա մաս
II/2 հավելված	II հավելված, Բ մաս
III/1 հավելված	III հավելված, Ա մաս
III/2 հավելված	III հավելված, Բ մաս
IV հավելված	IV հավելված
V հավելված	V հավելված
—	VI հավելված
—	VII հավելված